184

1. Ելնենք Գողգոթա, ի՛մ եղբայր,
Ուր Մեսիան խաչված է, որ ղրկեց մեր Հայր,
Նա հայտնեց բոլորիս, թե սեր է Աստված,
Բժշկեց մեր վերքերն, բայց այժմ՝ Նա խաչված.
Փառք տանք մենք Նրան:

2. Ելնենք Գողգոթա, ի՛մ եղբայր,
Մեր մեղաց համար տանջվում է վշտաց Այր,
Նա ծարավեց, Նրան քացախ մեկնեցին,
Նրա կենաց ջրով աշխարհ լիացավ.
Գովենք մենք Նրան:

3. Ելնենք Գողգոթա, ի՛մ եղբայր,
Ե՛կ, եղբայր, բարձրանանք սրբազան այդ վայր,
Ուր Հիսուս աղոթեց. «Հայր, ներիր սրանց,
Եկ, որ այդ աղոթքով ապրի և մեր անձ.
Օրհնենք մենք Նրան:

4. Ելնենք Գողգոթա, ի՛մ եղբայր,
Ուր գոչեց Փրկիչը՝ բոլորից լքված.
«Ո՜հ, Աստված իմ, Աստված, ինչո՞ւ թողուր զիս»:
Իմ եղբայր, որ փրկե հոգիդ և հոգիս.
Դիմենք մենք Նրան:

5. Ելնենք Գողգոթա, ի՛մ եղբայր,
Փրկչի խոսքը հնչում է խաչի վրա.
«Կատարված է, հոգիս ավանդում եմ Քեզ»:
Այսպես զոհվեց մեզ համար Գառնուկը հեզ.
Հիշենք մենք Նրան:

6. Ելնենք Գողգոթա, ի՛մ եղբայր,
Բարձրանանք դեպի այս ահեղ մրցավայր:
Մեր մեղքը Նա կրեց ու տանջվեց անձայն,
Ո՜հ, ինչ թանկ գնով Նա գնեց փրկություն:
Պաշտենք մենք Նրան: